ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/24

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Երվադա» ՍՊԸ-ի 16.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Երվադա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) 16.02.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար ս/թ փետրվարի 5-ին հայտարարել է «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի կարիքների համար «ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ» ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգերի հայտերի բացման օր է սահմանվել 12.02.2018թ:

Հայտեր են ներկայացրել «Երվադա» ՍՊԸ-ն և «Կարկոմավտո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2018թ-ի ժամը 10:30 կայացրած նիստի N 2 Արձանագրության համաձայն 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Կարկոմավտո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում՝ հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

«Կարկոմավտո» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտի ապահովում իր կողմից ներկայացրած գնային առաջարկի հինգ տոկոսի չափով՝ 1 137 000 / մեկ միլիոն հարյուր երեսունյոթ հազար ՀՀ դրամի չափով: Սակայն որպես հայտի ապահովում ներկայացրած Տուժանքի մասին համաձայնագիրը և Վճարման պահանջագիրը ստորագրվել է էլեկտրոնային եղանակով Արման Թադևոսյանի կողմից: Չնայած որ «Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից կից ներկայացվել է ընկերության տնօրեն Աշոտ Շախմուրադյանի կողմից Արման Թադևոսյանի տրված լիազորագիր, գտնում ենք, որ «Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է մերժվեր գնահատող հանձնաժողովի կողքից, քանի որ.

Ընկերության կողմից խախտվել է Տուժանքի մասին համաձայնագրի «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված օրինակելի ձևը. Մասնավորապես հանված է տնօրեն պարբերությունը, գրված է լիազոր ներկայացուցիչ և ստորագրված է լիազոր ներակայացուցիչի կողմից:

Ընկերության լիազոր ներկայացուցիչի կողմից ստորագրված հայտի ապահովման և վճարման պայմանագրի հիման վրա ընկերությանը սպասարկող բանկը չի վճարի պատվիրատուի կողմից պահանջված գումարը, եթե հետագայում ընկերությունը խախտի Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.3 ենթակետով նշված գործառույթները:

Ընկերության տնօրեն Աշոտ Շախմուրադյանի կողմից Արման Թադևոսյանին լիազորագիրը տրվել է 07.02.2018թ.: Այսինքն, 09.05.2018թ.-ից հետո ընկերությանը սպասարկող բանկը և «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ն չեն կարող ընկերությունից պահանջել որևէ պարտավորության կատարում:

Գտնում ենք, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը. Հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նուն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18» ծածկագրով ընթացակարգի արդյունքում «Կարկոմավտո» ՍՊԸ-ի որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի տրամադրման գործընթացը և պայմանագրի կնքման գործընթացը:

2. Չեղյալ համարել «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի կարիքների համար «Ավտոմեքենաների» ձեռքբերման գնանշման հարցման «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 12.02.2018թ.-ի ժամը 10:30 կայացած նիստի N 2 Արձանագրության 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելը: «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18» ծածկագրով ընթացակրգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Երվադա» ՍՊԸ-ին:

«Երվադա» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 21.02.2018թ. թիվ 8.1-67 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի 1-ին կետում նշված տուժանքի համաձայնագրի խախտման վերաբերյալ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով տուժանքի օրինակելի ձև նախատեսված չէ: Նշված փաստաթուղթը նախատեսված էր հրավերի օրինակելի ձևով և հաստատված է

լիազորված անձի էլեկտրոնային ստորագրությամբ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի դիտվել որպես հրավերի պահանջների խախտում, քանի որ գնման հայտում ներկայացված լիզորագրում լիազորված անձը ունեցել է համապատասխան իրավասություն:

Բողոքի 2-րդ կետում նշված փաստարկը առ այն, որ մասնակից ընկերության բանկը չի վճարի պատվիրատուի կողմից պահանջված գումարը եթե հետագայում մասնակից ընկերությունը խախտի հրավերի I մասի 7-րդ կետի 7.3 ենթակետով նշված գործառույթները, գտնում ենք, որ վերընշված փաստարկը չունի բավարար հիմնավորումներ, քանի որ համաձայն տուժանքի համաձայնագրի 1.4 կետով սահմանված է.

Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

Բողոքի 3-րդ կետում նշված լիազորագրի գործողության ժամկետի խախտման մասին հայտնում ենք, որ տուժանքի համաձայնագրի 2.1 կետով նախատեսված 90 (իննսուն) աշխատանքային օրը վերաբերվում է ոչ թե լիազորագրի գործողության, այլ տուժանքի համաձայնագրի գործողության ժամկետին:

Միաժամանակ հայտնում ենք, որ բողոք բերող անձի կողմից խախտվել է բողոք ներկայացնելու ժամկետը, քանի որ համաձայն հրավերի 12.4 կետի պահանջերի բողոք ներկայացնող անձը կարող է բողոքարկել պայմանագիր կնքելու որոշումը, որի վերաբերյալ բողոքը պետք է ներկայացվեր անգործության ժամանակահատվածում, կամ գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, որի վերաբերյալ բողոքը պետք է բողոքարկման խորհուրդ ներկայացվեր մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:»:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ Վարդան Չիլինգարյանը և Արտակ Փահլևանյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Երվադա» ՍՊԸ-ի 16.02.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 21.02.2018թ. թիվ 8.1-67 գրավոր դիրքորոշումը և կից փաստաթղթերը, ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 16.01.2018թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, «Կարկոմավտո» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը, «Կարկոմավտո» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 07.02.2018թ. Արման Թադևոսյանին տրված լիազորագրի պատճենը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ), որին մասնակցության հայտ են ներկայացրել «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն և «Երվադա» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 16.01.2018թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝ 1-ին կետով որոշել է, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչել ընտրված մասնակից:

«Երվադա» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից, որպես հայտի ապահովում ներկայացրած տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ստորագրվել է էլեկտրոնային եղանակով Արման Թադևոսյանի կողմից: Ընկերության կողմից խախտվել է տուժանքի մասին համաձայնագրի «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված օրինակելի ձևը՝ մասնավորապես հանված է տնօրեն պարբերությունը, գրված է լիազոր ներկայացուցիչ և ստորագրված է լիազոր ներակայացուցիչի կողմից:

Բողոքի քննության նպատակով 21.02.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով տուժանքի օրինակելի ձև նախատեսված չէ: Նշված փաստաթուղթը նախատեսված էր հրավերի օրինակելի ձևով և հաստատված է լիազորված անձի էլեկտրոնային ստորագրությամբ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի դիտվել որպես հրավերի պահանջների խախտում, քանի որ գնման հայտում ներկայացված լիզորագրում լիազորված անձը ունեցել է համապատասխան իրավասություն:

«Կարկոմավտո» ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Շախմուրադյանի կողմից Արման Թադևոսյանին 07.02.2018թ. տրվել է լիազորագիր հետևյալ բովանդակությամբ.

««Կարկոմավտո» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Աշոտ Շախմուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության համաձայն, լիազորում է Արման Թադևոսյանին /ՆՔ՝006687578, տրված 11.08.2015թ. 004-ի կողմից/ ընկերության անունից հանդես գալ «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ում՝ մասնակցելով ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18 ծածկագրով մրցույթին, ներկայացնել հայտը, տալ և ստորագրել դիմումներ, ներկայացնել բացատրություններ, ինչպես նաև կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր գործողությունները, որոնք կպահանջվեն առաջարկների ներկայացման և մրցույթին ընկերության լիարժեք մասնակցությունն ապահովելու համար:Սույն լիազորագիրը տրվում է առանց վերալիազորման իրավունքի, երեք ամիս ժակետով:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 2-րդ մասի 1-ին կետի՝

- 8-րդ ենթակետի համաձայն՝ հայտը՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է,

- 9-րդ ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը՝ նույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է.

• 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

• 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Խորհուրդն արձանագրում է, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված փաստաթղթերը, տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ստորագրվել է էլեկտրոնային եղանակով Արման Թադևոսյանի կողմից:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Շախմուրադյանի կողմից 07.02.2018թ. Արման Թադևոսյանին տրված լիազորագրով սահմանված չէ ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացվող փաստաթղթերը և հայտի ապահովումը վերջինիս կողմից ստորագրելու լիազորություն:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և հայտի ապահովումը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելով և 1-ին տեղ զբաղցրած մասնակից ճանաչելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 40-րդ հոդվածի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Երվադա» ՍՊԸ-ի 16.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2.Չեղյալ համարել «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ի կարիքների համար «Ավտոմեքենաների» ձեռքբերման գնանշման հարցման «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 12.02.2018թ. ժամը 10:30 կայացած նիստի N 2 արձանագրությամբ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/18» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Երվադա» ՍՊԸ-ին 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ